

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ԱԼԱՎԵՐԴՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ- ն ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԿԱՆՉ ՍՊԱՍԱՐԿՈՂ ՀԵՐԹԱՊԱՀ ԲՈՒԺՔՐՈՋ և ԻՄՈՒՆԱԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԱԲԻՆԵՏԻ ԲՈՒԺՔՐՈՋ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ:

Մրցույթին մասնակցելու համար անձը աշխատանքային խմբին է ներկայացնում

1. Հանձնաժողովի խմբի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է
2. Փաստաթուղթ՝ պետական նմուշի դիպլոմ միջնակարգ մասնագիտական կրթության մասին
3. Անձնագրի պատճենը, հանրային ծառայության համարանիշը
4. Ինքնակենսագրություն
5. Թափուր աշխատատեղն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները՝ դրանց առկայության դեպքում,

6. Մեկ լուսանկար 3X4 չափի,

1. Պարտադիր պայմաններ են՝

- Միջին մասնագիտական կրթության առկայություն
- Բժշկական էթիկայի կանոնների իմացություն,

2. Լրացուցիչ պայմաններն են՝

- Համակարգչով աշխատելու ունակություն

-Վերջին 5 տարում մասնագիտական աշխատանքի կամ վերապատրաստման առկայություն

- Տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ՝ անձամբ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2021թ.-ի փետրվարի 10-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից մինչև 15-ը՝ բացի շաբաթ , կիրակի և ոչ աշխատանքային օրերից

«Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի՝ Լոռու մարզ ք.Ալավերդի Սայաթ-Նովա 20 հասցեում:

Մրցույթը տեղի կունենա 2021թ-ի փետրվարի 16-ին՝ ժամը 15:00, Լոռու մարզի «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքում:

Հեռախոս՝ (0253) 2-33-12

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ